

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	10 ֆր.
Վեցամսեայ	5 »
Առաստանմանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Անկերկոյի համար	
Տարեկան	2.70 ֆր.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆԻՒԹԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ	
Իտալացիական տպարանի և Երևանի համար 40 անկերկոյի համար 20 անկերկոյի համար 20 անկերկոյի համար 20 010 զեղջ կրկնայ.	

ՇԱՆՏՈՒՄ

Նամակ և գրամ գրկել
Խմբագրութեան հասցէին

Редакция на восточном
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ԱՆԳՆԻԱ ԵՒ ՄԻՒՍ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եւրոպական ցամաքային պետութիւնները ամենքն էլ զարեւոր նախանձով աշխուժ էին դէպի Անգլիան, որ աշխարհի հարստութեան մեծ մասը իր գրգռպանն էր հաւաքում:

Ամէնքն էլ մի յարմար վայրկեան, բոլոր էին փնտռում Անգլիայից վրէժ լուծելու, բայց վերջինս միշտ զգոյշ էր մնում, միշտ խուսափում էր այնպիսի մի գործ, մի պատերազմ սկսելու, որ կարող էր իրեն զբաղեցնել, իր պատերազմական զօրութեան մի խոշոր մասը զրաւել և այդպիսով յարմար առիթ ստեղծել եւրոպական նախանձոտ մեծ պետութիւններին օգտակար Անգլիայի գլուխը խառն վիճակից:

Բայց այս անգամ Անգլիան չը տատանվեց. նրա կառավարութիւնը ամենամեծ զգուշացումով սկսեց պատերազմը թրանսպարի դէմ. արգեօք նրա համար, որ յոյս ունէր թէ շուտով կը յաղթի փոքրիկ հակառակորդին և նորից պատրաստ կը լինի մեծերի դաւերը խորտակել, թէ ինքզինքը կազմ ու պատրաստ զգաց ամենամեծ հակառակութեան անգամ զիմագրելու:

Պատերազմը սկսվելու օրից մինչև հիմա, անգլիական զօրավարները միշտ պարտվում են Հարաւային Աֆրիկայում. ամբողջ եւրոպայի համակրութիւնը Բոէրներին կողմն է, օտար կառավարութիւնները թէև ուղղակի չեն աջակցում Բոէրներին, բայց քաջալերում են նրանց աջակցող ժողովրդներին. ամենքն էլ մեծ հրճուանքով ընդունում են անգլիացիների պարտութեան լուրերը և մեծ մեծ փորձանքներ գուշակում Անգլիայի համար: Եւ այդ բոլորը վարագուրված մարդասիրական, ազատասիրական գաղափարների քողով:

Այո, Անգլիայի թրանսպարի փոքրիկ ժողովրդի գէմ բացած պատերազմը անարդար է. անխղճութիւն է և ազատական ու

ԼՍԻ Է ՈՒՇ ՔԱՆ ԵՐԲԷՔ

Ինչպէս որ անվիճելի իրողութիւն է ըսել թէ մեր ազգը քաջարի յառաջդիմականներ, հայրենիքին նուիրուած անձնուէր, յեղափոխականներ, տգիտութիւնը և կրօնամոլութիւնը հալածող և մտաւոր զաւակներ ունեցած է. նոյնպէս և անվիճելի իրողութիւն է թէ առոնց հակառակ վատ, լոյսի և ազատ գաղափարների գէմ կռուող վիժուկներ ալ անեցած է:

Վերջերս Ամերիկայի մէջ խրնդիր մը ծագեցաւ յառաջդիմական և պահպանողական հայ կուսակցութիւններու միջև. «Կղերներու և ժամու պատարագի» մասին:

Այդ խնդիրը ուրիշ անգամ հայերու համար շատ հին է, բայց մեղի՝ Ամերիկայի հայերու համար նորութիւն մըն է:

Ազատականները անսնով որ ձգտում մը կայ անպէտք և վնասակար կղերներու թիւը աւելցնել՝ այնպէս որ եթէ այսպէս երթայ Սարածեան եպիսկոպոսը երկիրը կղերով պիտի լեցնէ ըսելով՝ «անձնեք և բազմացարուք»! սկսան բողոքել: Սրբազանը կը պատասխանէ՝ «այդ իմ գիտնալիք բանս է». անգլիէն պահպանողականները, յայտնի նկատուածով, սկսան կղերները պաշտպանել. մարդու հաւատալը չէր գար, որովհետեւ զլիւսուոր պաշտպաններէն մին, «Չայն Հայրենեացի» խմբագիր Պ. Չիթչեան, ասկէ քանի տարի առաջ քարոզիչ էր և կրէր. ես «Աւետարանին» չեմ հաւատար, ան հարուստներու կազմած «մի ծրագիր է»: Եւ ատոր համար ձգեց քարոզչութիւնը:

Ատոր մէջը գաղտնիք մը պիտի ըլլար, և իսկապէս կայ եզեր. Պ. Չիթչեան Սարածեանէն խնդրած է զինքը քահանայ ձեռնադրել և Պարսկաստանի զրկել: Ի՞նչու Պարսկաստան, խնդիրը հոս է... «Բայց անձնեք մեր ազան, ձեր աղջիկը կառնէ»: Թող Չիթչեան Պարսկաստան երթալու ետեւէ լինի, մենք իր

գաղափարին գէմ չենք. բայց իրեն կը հարցնենք, ի՞նչպէս խիղճին հետ պիտի հաշտուի քարոզչու այն անտարանն, սրուն չի հաւատար և «հարուստներու ծրագիր կը կոչէ»:

Ու երբ համարձակի Սարածեան եպիսկոպոսին ըսել թէ՛ այսպիսիներ աէրտէր կամ վարդապետ ընելով «վերջինը շար կը լինի քոնի պառաջին», ան նորէն կրնէ. «այդ իմ գիտնալու բանս է». եթէ երբէք բան ալ գիտէ:

Ահա այս է մեր սէրտէրնիւր. վարդապետներու և պատուելիներու հալը, շատ սակաւ բացառութիւններով: Եւ երբ ազատական մը (Գաշնակցականներէն) Բարկէն սկսաւ «Չայն Հայրենեացի» խմբագրած «Ժամ ու Պատարագի» զրա. օք քննադատութիւն ընել՝ ժողովուրդին աչքին լոյս սփռելու համար. և ըսել (չեմ գիտեր «Հայրենիք» որ թիւին մէջ) թէ «Ժամը Պատարագը» չէ որ ազգը իր հետ բերած հոս հասուցած է, այլ ազգն է որ «Ժամը Պատարագը» եկեղեցիով միասին մինչև մեր օրը հասուցած է. և ընդհակառակը կրօնամոլութիւնը ու կղերը մեր տունը քանդած են. միշտ «գոթիք» և արքայութիւն» քարոզելով և միմիայն իր փոքրին վրայ մտածելով:

Բարկէն՝ հակառակ Եւհէնի «Ժամ ու Պատարագին» կողմէր փարիզ «յեղափոխութեան»: Եւ սահա ստոր գէմ՝ կատարած յետադիմականները սկսան մրտել և հայհոյել յառաջդիմականները՝ «Բարկէն, Լէօ», «Հայրենիք» խմբագիրն և ուրիշներ:

Այսպէս սահ կարգ մը գրողաւորներ սկսան սպիտակ թուղթերով ու սեւ թել «խանատան» ըրով ժողովրդի մտքերը պղտորել ազադակելով՝ «աս յառաջդիմականները անհաւատներ են՝ ազգային եկեղեցւոյ թշնամիներ»:

Եւ մէկը կը փորձուի քննել, իմանալ թէ ո՞վ է, կամ ուսկէ եւ կամ է հայրենիքի այդ թշնամին՝ «տգիտութիւնը» յանկարծ, գէմ կելլեն խաւարումիտներ, իրենց

արքանեակներով և կսկսին մոլե-
ռանդութեան ահռելի սրով շարգ-
ու փշուր ընել ամէն մի բարե-
նպատակ ձեռնարկ :

Ի՞նչ, կուզէք որ հանգիստ նըս-
տինք, չը հասկնանք, չը քըն-
նենք մեր մայր հայրենիքը մա-
հուան գուռը հասցնող պատճառ-
ները :

Ձէ պարոններ, ամօթ է. մի
խեղաթիւրէք. ձեր հակառա-
կորդները կրօնն, էթէ ըստ ձեր
ըսածին, « Ժամ-Պատարագի » և
կզերի շնորհիւն է որ հայ ազգը
մինչեւ օրս ապրած է, ի՞նչու
այսուհետեւ այդ շնորհքը գործ
չը դնենք այն անմահ աշխար-
հին օգտին համար, որուն կը
պարտինք մեր կեանքը, մեր ա-
նունը և պատիւը, բայց ոչ եկե-
ղեցիին և կզերին :

Դիտե՛մ, ինձի ալ պիտի հայ-
հոյէք և ըսէք՝ եկեղեցիի և կզերի
կանաչի թշնամի ես. բայց ոչ
եղբարք. բա է ալ ոչ չափ սխա-
լեցանք. տեսէք հոն հայրենիքը
ինչ լիճակի մէջ է :

Մենք կուզենք մեր մայրը ան-
միջապէս բանաէն և շղթայէն ա-
զատել. անոր վէրքերը բուժել.
մինչեւ օրս եղած սխալները՝ ո-
րու մեծ պատճառը կզերը և ժամն
ու պատարագն են, շտկել :

Սոսկ դուք կը պաշտպանէք այն
կզերը որ այդ շղթաները գարե-
րով ամբարցուցեր է. իր ոչխար
դարձնող մոլեռանդ քարոզնե-
րով :

Ձգացէք և դուք պարոններ,
էթէ իսկապէս յեղափոխականներ
էք: Պաշտպանէք նախ սուրբ ու-
րովհետեւ ազատութեան համար
մղուած կռիւի միջոցին սուր կը
պաշտեն: Խաչ ու Աւետարանը
թողէք խաղաղ ատենի համար:
Ձգացէք. թէեւ քիչ մը ուշ պիտի
ըլլայ, բայց առածը կըսէ՝ լաւ է
ուշ քան երբէք :

Պ. ԱԻԵՐԱԿՑԻ
Ուսարբ, 7 Դեկտ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՐԷՆՍ, 10 Դեկտ.

Հոս վերջին օրերս մասնաւոր
քարոզչներ եկած են, մարդ սր-
աալու, ձեռու ընին «Արմէնիա»-ի
կտոր մը ունենալով :

Աստիճակէ երեկ պարոն մը մօ-
տեցաւ՝ զիս յեղափոխական «չի-
նելու» : Ուրիշ անգամ ալ պատա-
հած են այդպիսի քարոզչներ,
ստորանալով, քննելով համա-
զոյններ, զգացած եմ կեղծ ըլլալ-
նին, բայց նկատել տուած չեմ.
այլ ըսած եմ՝ ինձի ի՞նչ օգուտ
կը սպասէք որ այդչափ կատարնա-
նաք :

Կը զգամ որ մեր յեղափոխու-
թիւնը շատ զժուարիտ գործ է և
մինք պիտի ջանանք մեր յեղա-
փոխական ուժը բազմապատկել.
բայց ինչ ընենք որ շուրջ ընդի-
ման կուսակցամուրթիւնը կը թա-
ղաւորէ և ճշմարտութեան արձա-

գանքը ըլլալու քաջութիւնը կը
պակսի :

Օրինակի համար՝ հետեւն չեր-
թանք. հոս թէ Դաշնակցական
կայ և թէ Մարտական. Երկուքն
ալ ազգային յեղափոխութեան
օգտակար ըլլալու համար ժողով-
ներ կը սարքեն. բայց եկուր տես
որ երկուքին միջեւ որակաւոր-
ութիւն կը նշմարուի :

Երկուքն ալ միթիւններ կը ընեն.
բայց Դաշնակցականները Ազ-
գային Հնչակեաններուն խան-
գարելու միտքը երբէք յարցած
չեն. սակայն «Ազգային»-ները չեն
զադրիր ընդմիջող վերջ տալ ի-
րենց այս տղեղ վարմունքին :

Շատ անգամ տեսած եմ որ կու-
զեն Դաշնակցական միթիւնները
խանգարել անյայտ փորձերով.
Թող տեղւոյս Դաշնակցականները
չուռին քիչ մը իրենց կողմը տա-
չելովս. միշտ պիտի գովուին ժո-
ղովուրդի լաւ դաստակարգէն, էթէ
իրենք իրենց կողման արժանիքը
ալ աւելի յարգել գիտնան : Ես
կը քննադատեմ Մարտականներու
ուղղակի կամ անուղղակի ըրած
քայլերը, և ահա թէ որոնք են
ատենք. առաջին՝ որ որ երթան,
ուր որ նստին միշտ ճիշդ կը
թափեն Դաշնակցականները մրո-
տել, նոյնիսկ կան անհասանք
«կենդանի ընկածներ» որ նահա-
տակուող հերոսներու ոսկորնե-
րուն կը հայհոյեն. երկրորդ՝ երբ
կը տեսնուի Մարտի, Նոր-կեանքի,
Անահիտի, Արմէնիաի, Չայն-Հայ-

րենեացի և էն վերջինը Իրա-
ւուքի արչաւանք ընդդէմ Գաշ-
նակցականներուն կառնեն ու կը
քալեն :

Վերջերս Արմէնիաի համար մը՝
պրօպականտիստի փոխան, մին-
չեւ Լօվէլ զրկած են... որպէսզի
ատով գեր կատարեն...

Այսպիսով, պարոններ, դուք
ձեր վարկը կը կտորէք--անգի-
տակցաբար, լուրջ և ողջամիտ
դասակարգին առջեւ :

Հայրենիքի մէջ կը ապագրուի
«Հայաստան»-ի Պօլիս խորագրով,
Մինաս Չերաչի, իր Արմէնիի
մէջ գրած ֆրանսերէն յօդուածի
թարգմանութիւնը որ ըրած է
Տօթթէօր Արչակունի : Այդ յօդ-
ուածը Արփիարիանի, ինչպէս
հոս Դաշնակցականները կը կո-
չեն «ստու թեան բանաստեղծի»
հին մեղքերը երեւան կը հանէ.
Ազգային Հնչակեանները սկսած
են փեղցիկով զիտուցութիւններ
ընել. ինչու, որովհետեւ Տ. Մի-
նաս Չերաչ Արփիարին ջիւղբուն
զիպու. և Տ. Արչակունի ալ,
կարծես թէ հայուն Արփիարի ա-
ւելի մօտէն ճանչցնելու համար՝
թարգմանք է : Իսկ Չերաչ ար-
տասանմանի հայերու մեծամաս-
նութեան համակրութիւնը կը վա-
յելէ. ուրեմն Արփիարի հասած
հարուածը ուժգին է :

Այսօր Մ. Նահապետի բողո-
քականներու պետը՝ Մ. Հ. Ալէքը
հայերը հրաւիրած էր իր քարո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՅՈՅ ՊԱՆՂՈՒԽՏԻ ԿՈՉԸ

Թղթակցութիւններ կարկուտի
նման կը տեղան խմբագրութեանց.
չրագրական ազդու մըն է որ բարձ-
րացած է. ապառ մեկուսի կեցած
կը դիտենք թէ ի՞նչ է. արդեօք :
Հա, Մշտյ առաջնորդական տեղապահ
Բարկէն վարդապետի կողմէն նոր
«կոչ» մը առ մշեցի պանդուխտ աղ-
քայինս : Դեպի ո՞րք : զկպի հայրե-
նիք, ապա թէ ո՞չ կիւնեթոն ամուս-
նանալու արտօնութիւն պիտի արու-
նա՞նք երկու ամիս ժամանակ, միւս-
նոյն միջոցին ալ կանանց կրկին
ամուսնանալու համար կրօնական
ժողովն արտօնութիւն կը խնդրուի
այդ արեղայ կրօնաւորին : Արդեօք
ժողովրդեան ներկայ անտանելի գա-
ւերուն միակ դարմանը այդ է՞ր ե-
ղած. իրմէն առաջ եղողները չէին
կրցած խորհիլ և հրապարակաւ
«կոչ» ընել : Բարկէն վարդապետ
այդ գիւտը յղանալով ժողովրդեան
ցաւերուն թեթեւացումը առաջ պի-
տի բերէ. աւելի լաւ կըլլար. Օր-
մանեան այդ «կոչ» ընելու փո-
խան ութ ամիսներէ ի վեր օրինա-
ւոր անցագրով հայրենիք մեկնող
հարեւրաւոր մշեցիներ Տրապիզոնի
«Քան»-երու անկիւններէն ազատել
ջանար : Արդեօք այն խեղճերն քիչ
տեսնելով, ինքն ալ կուզէ՞ մասի մըն
ալ թշուառութեան պատճառ դառնալ.
Տաճկաստանի ուրիշ քաղաքներէն

միայն իսաներու անկիւնները բեր-
դարգելութեան դատապալայել սալ
ամիսներով. գուցէ եւ՝ ասորիներով :

Ձէ, կը սխալի այդ արեղան.
մշեցի պանդուխտը՝ գիտէ իր հաշիւը.
կը ճանչնայ իր հայրենի օժտարը, կը
սիրէ իր կիւնը և զաւակները, և
կը զուրգուրայ անոնց վրայ. իր
օրուայ շահին երեք մասը յատկա-
ցուցած է և կը յատկացնէ իր օ-
ճախին. ամէն մարդ կուզէ և կը
փափաքի բաժնի պատշտանքու գլուխ
անցնիլ. բայց ինչո՞րք պաշտօնի
զուրկը անցնիլը չէ, այլ կառավարի-
կէ մըր նորընտիր արեղան կառա-
վարի զիտանար, իր «կոչ»էն առաջ
կրնար հետամտիլ Մշտյ առաջնորդա-
րանի արձանագրութիւններուն և
որոշ գաղափար մը կազմելով, էթէ
հարկ ըլլար, այդ տեսակ հրաւեր մը
կարգալ, թող կարգար : Քանի որ Մշտյ
առաջնորդական գահի վրայ բարձրաս-
տիճան, չըջահայեց, փորձառու,
ժողովրդականացած կրօնաւորներ
երկար սարկներ պաշտօնավարած
են. օրգիսիք են, Աղուանեան Գրի-
գորիս, Վեհափառ Որթման Հայրիկ,
Սրուանձտեանց Գարեգին, Ալիաթ-
ճեան Գրիգորիս, Մամիկոնեան Մամբ-
րէ սրբազաններ և այլ. կրկին այս
ժողովուրդն էր Մշեցիին, և այդ
պանդուխտութեան կուռը իր առաջ
չէ կրած : Եթէ առարկուի ընդհանուր
առաջնորդական տեղապահի կողմէ
թէ մշեցի պանդուխտը այն ժամա-
նակները հաստատութիւն էր գէպի իր
հայրենի օժտար, իսկ այժմ ոչ. ա-
սոր ալ պէտք էր հետամտել. քանի
որ ինքը մշեցի պանդուխտի կեղծոն

կը գտնուէր. և մշեցի պանդուխտը
իր շահած գրամը ինչ միջոցներով
հայրենիք կը զրկել, կրնար իր բո-
ւորտիքը հասարակած քաղաքական
ժողովէն տեղեկանալ, և բոս այնմ
հրապարակ նետուիլ : Կարծեմ թէ
երկար սարկներ մշեցի պանդուխտի
չահագործումն, մշեցի հայ «փօլիցա-
ճի» վաճառականներէ. Տաճկաստան
թէ արտասանման հայ լրագրութեան
նիւթ էր դաժած, զի ու այսօր
կենդանի ապացոյցներ Ռուսաստան
կը մնան, ինչպէս որ Պաթուսի մէջ
խեղճ մշեցի պանդուխտը «փօլիցաճի»
աղրուկներէն ազատելու համար մե-
ծայարգ վճարական մոլորանով յայտա-
բարած էր «Մակար թերթի միջոցաւ,
ճրիպակ մշեցիի գրամը իր սուներ
հասցնելու, և այդպէսով մշեցիի
օճիքը ազատելու արիւնարբու «փօ-
լիցաճիներէ» :

Մեր գերապատիւ առաջնորդական
տեղապահը, կրնար Մշտյ փօլիցաճի-
ներէն՝ որք են Սահակեաններ, Պօ-
ղոսեաններ, Ռաշմանուկեաններ,
և այլն. տեղեկանալ, մինչեւ 1896
թուական, և որոշակի գաղափար
մը կազմել, և ոչ թէ «կոչ» ընելով
յետոյ կարմիրը ու ետ քաշուիլ. մի
միայն Մշտյ ինչ զրեղի մը հաշիւը
աչքէն անցնելով կը տեսնէր թէ սարկի
ոչ թէ հարկւորութիւն որ այլ հազարաւոր
ատճակական կարմիր ոսկիներ զըր-
կուած է, մինչև պանքայի ցոյցը.
ատով կարելի է միւս գիւղերու հա-
չիւններն քաղաքապետութեան դնել ու իր
աչքին պիտի զարնէր վերսիշխալ
«փօլիցաճի»-ներու արձանագրու-
թեանց մէջ, և այն ժամանակ պի-
տի գիտնար թէ մշեցիին իր հայրենի

օժտար չէ մոռցած. գորդուրած է
անոր վրայ չէն պահելու, և մին-
չեւ իր վերջին շուշը ուխտած է
հատարիմ մալ, բացառութիւն
մէկ կողմ թողնելով :

Պալով թղթակցութիւններուն, որոնք
չատ անգամ իմաստակ գրիչներ են,
և քննադատական հովեր ստնելով
ատեն ատեն կիւս լեզուաւ մը կը
հարուածէին մեր կրօնական դասա-
կարգը, քահանայէ սկսեալ մինչեւ
կաթողիկոս, անոնց թիւ ու զիմ
կողմերը նկարագրելով, և շատ
քիչեր կը գտնուին այդ դասակար-
գի մէջ իրենց ուխտին հաստատ. և
ներկայ ճշմարտութի պահանջմամբ
հայ ժողովրդեան պաշտպանող, ամէն
տեսակ վտանգ ինկատի առնելով,
արդեօք այդ արեղայ Բարկէն յի-
շալ երկու դասակարգէն, որոնք
կը վերագրեն. ահա՛ հարց մըն է որ
մշեցի պանդուխտներս կը շուտ արեցնէ-
մշեցի պանդուխտի քննադատնե-
րուն կը միայ լուսաբանել քանի
որ կը տեսնենք թէ Օրթմանեան մը իր
ազգեցութիւնը Հայաստանի ամէն
գաւառներու մէջ մտցնելու համար
իր արմաշական արեղայները մէջտեղ
կը քչէ. այն ինչ միւս կողմ փորձա-
ռու ժողովրդականացած, և շատ
սարկներ Հայաստանի գաւառներու
մէջ առաջնորդութիւն ըրած. ժո-
ղովրդեան ներքին կեանքին ծանօթ
կալիսկոպտներ, վարդապետներ կան
ինչու՞ ստոնք անպաշտպան ձգելով
անփորձ, վանական կեանքի մէջ
սնած և մեծցածները ի պաշտօնի կը
կոչէ. արդեօք ինչ որ ինքն ի Պօլիս
կը գործէ, նոյնը գործադրել պիտի
սայ ստոնց. Հայաստանի խուլ ան-
կիւններու մէջ :

զին մտիկ ընելու : Հայաստան պատերազմի շատ զեղեցիկ կերպով և զբազան փաստերով խօսեցաւ հայերու անցեալ և ներկայ կեանքի վրայ : Սուրբ զիրքէն օրինակ բերաւ «նգրաս» . ախար մը , որ իր սկզբունքներուն վրայ միշտ հաստատ , իր սովորն կամքովն ու իր բարոյական ուժովը կը յառաջանար առանց ժողովրդի քմահաճոյքներու հետեւելու , և բացական չէր քանի մը անգամ . «երանի թէ հայերը եզրասի պէս շատ մը մարդիկներ ունենային» : Իսկ ես ալ հոս կա ելցնեմ . երանի թէ հայերս ունենայինք Ալէքի պէս քանի մը հազարներ . ու այն ասան Հայաստանը ազատ էր — բայց աւա՛յ . . .

ԾՊՏԵԱԼ

ՍՕՏԻԱ, 19 Դեկտ.

Սթալինի քապիտէլի շատ անգամը ու անոր սխալները Պուլկարիան գրին այն կացութեան մէջ որ հիմակ կատարեալ անտեսական տագնապի մէջ կը հեծէ երկիրը : Նոր կառավարութիւնը այդ պէտքերը դարձան ներքին միակ վերաբար միջոց գտած է շարք մը բարեփոխութիւններ . ու խնայողութիւններ ընելը , 1900 տարուան պետական պիւտճէն զգալի կրճատում պիտի ունենայ ճ միլիոն թեթեւեղելով առջի պիւտճէն և 83,887,296 ֆրանք պիւտճէ մը պատրաստելով : Ամէն նախարարութիւն ի-

րեն արտօնուած որոշ հաշուեկշիռէն , մինչեւ իսկ անհրաժեշտ եղող միջոցները զոհելու ստիպուած է : Այս տնտեսական բարեկարգութիւններու համար կըրթական գործը իր բուրաստաններէն պիտի դրկուի . շատ մը արական ու իգական կիսմաշկիւններ , մանկավարժական ու նահանգական դպրոցներ պիտի փակուին . կըրթական նախարարութեան ամենապէտքական պիւտճէն ուսումնական խորհուրդը պիտի խափանուի : Ամէն մի կառավարական հաստատութիւն իր ծախսերը ու պաշտօններու թիւը պիտի քիչցնէ , այնպէս որ հազարաւոր ընտանիքներ 1900 տարուան հանգէպ նոր թշուառութիւններու մէջ պիտի իյնան այս պայքանեան ցրտաշունչ փոքրին : Մէկ կողմէն խնայողութիւն , միւս կողմէն տուրքերու յաւելումը ակամայ յիշել կուտայ այդ 97 թուականին Փեթերսպոլի այցելութիւնները , յոտս կայսերական գահոյից մատուցած թանկագին ընծաները . երախտագրական ձօնը , հացկերպիները անվերջ պայտանները որոնք 10 միլիոնի նստան Պուլկարիոյ վտիտ վզին , հանրային շինութեան նախարար Մաճարովիի Պուրկալի քարափ պայմանագրերը լուծելը 1 միլիոն շորս հարիւր հազար ֆրանքի և զուգահեռական գիծի շինութիւնը 7 միլիոն ֆրանքի : Այս ամէն անխիղճ վատնումները հի-

մակ պիտի տուժէ ցրտիչ մը , ուստիկան մը կամ պաշտօնեայ մը : Սօպրանիէն մինչեւ յունուար 23 իր նիստերը պիտի շարունակէ : Առանց ազմուկի ու խոռովութեան միջադէպեր քիչ կը պատահին . անցեալ 11ին , մի հարցապնդումի առթիւ ատենաբանի ու ընդդիմադիր երեսփոխանի մը միջեւ հայհոյանքներու փոխանակութեան վերջը՝ գործը տպտակահարութեան ու կոտորածարտի յանգեցաւ . Սօպրանիէն 325,000 ֆրանկայման ֆօնտ մը կառավարութեան տրամագրութեան տակ գրաւ իր թագուս հպատակներուն համար : Պանքաներու ներկայացուցիչները Սօֆիա են , բանակցութիւնները քիչ օրէն կը վերջանան , 30 միլիոն ֆրանքի փոխառութիւն պիտի կնքուի , կառավարութիւնը ատոր գէժ գրական պիտի առջ մաքսը և ծխախոտի պանտօզը :

Արժամ թղթագրամները հաւաքելու լուր կայ , և անոնց տեղը նոր 40 միլիոն արժէքաւոր թուղթեր հանել , որոնք 25 միլիոն ֆրանքի արժէքով պանքաներու մօտ գրաւի պիտի գրուին :

Սերային սխրագործութիւններու աղետալի վաղճանը . . . քաղաքի թնդանթաճիզ գնդապետ X ճշմարիտ սալօնի առպետ մը , զեղեցիկ սեպի վրայ տարած յաղթանակներէն որրշիւս վերջերս իր ստորագրեալներէն ,

ստորին աստիճանաւոր նոր ամուսնացած և նիստապայի մը զեղեցիկ ու զեռատի կնկան մեղբայրուսինի քաղցր բուրումը վաշելելու իր յանգին : Գնդապետը իրեն լաւ որտորդ , զի լաւ կը հրապարէ այդ նոր կեանքի զուարթ արեւին զիմոյ թիթիւնիկը և որպէս զի աւելի անտրգել ու ազատ անձնատուր ըլլան իրենց հեշտարոյք սիրոյ մամբուլն՝ զնդապետը պատրաստ ստեղծելով միշտ ու անդադրում օրատահ կը կարգէ . կը սուտէ ու կը բանտարկէ և նիստապան զօրանոցին մէջ : Են թառապան բոյւրովին հիասթափ իր այս վիճակի յանկարծակի փոփոխութեան , ծանր խոհեղութիւն կատարած իր պաշարուի . վերջապէս իր ընկերներէն իրաւել կը ըլլայ իր շնորհագուրդ լինելուն բուն պատճառը : Սր մը զօրանոցէն ու զգալի ատեն կը սլանայ և իր կինը իր զնդապետի գիրկը կը գտնայ , մոլեգին յարձակումով սուրի հարուածներով զնդապետը կտոր կտոր կընէ : Այս սճիրք իր տեսակին մէջ անզուգական վստապատրուութիւն թողած է . նամա . նաւանդ որ զնդապետը բարձր ընտանիքի կը պատկանի : Պուլկար սպայական մարմինը միշտ նախանձելի բարձրութեան վրայ պահած է բանալի պատիւը . իր դատապարտելի քայլերով անհատ մը չը կանար սպարտել զայն . գա միայն իր դատաւճիտը կը ստորագրէ :

Թ.Գ.Ա.Կ.Ե.

—) (—

Օրմանեաններ և Բարկէններ չէին մինչեւ այսօրս մեցիլի օճախը չէն պահող . իրենց օճախակութեամբ չէր որ մինչեւ ցարդ մեցիլ պանդուխտի կիներ ու զաւակներն սպրեցան . մեցիլն թէ երկրի մէջ և թէ դիւրսը գրեցաւ . դիմադրել այն անասանելի գազանութիւններուն , որոնց ամբողջ Հայաստան ենթարկուեցաւ . իր սովորութեամբ դրամական օգնութեամբ մինչեւ օրս սպրեցաւ և ասպրեցուց . երբեք սեղծ մը իսկ նրպատ շտապանալով : Մեցիլն իր ամուսնական յետք չէ գրեմ , և հաստատարի մնացած է իր կրօնական ձէսերէն . բարձր բունած է իր կրօնքը , միեւնոյն ժամանակ իր օճախը : Թո՛ղ ցոյց աչուի թէ այս վերջին ի ժողովութիւններու ժամանակ , քանի մեցիլներ իրենց կրօնքին դաւաճանեցին պատաս մը հաջի համար : Ասորք պէնքն ալ անուրանալի ճշմարտութիւններ են . և երբեք մէկը չի կրնար ուրանալ . ուրեմն Բարկէնի «կոչ» մէջ կայ թագուն նպատակ մը որ ոչ կամ անագան պիտի պարզուի : Մեցիլ կինը , այսքան երկար տարիներ անանց ամուսնոյ համբերելով , և շատ մը առաջնորդական տեղապահներ սեանելով ու անցնելով , ինչու ձայն չը բարձրացուց և կրկնամուտսնութիւն չը պահանջեց և Բարկէնի միջոցին կը զիմէ , որ անպատուերի է իրեն և նախնական սովորութեանց հակառակ :

Այն ուրեմն Օրմանեանի այդ ձագուկ ձեռնասուն արեղան . ի՞նչ պիտի կրնար Մշտ զաւատի համար ընել . թէ ոչ Օրմանեանի հայալինջ ըն-

թագքին հետեւելով , ինչպէս որ իր «կոչ» յայտնի կընէ , Մուշ հասնելուն պէս , փոխանակ ժողովրդեան ներքին անասանելի ցաւոց դարման մը տանելու , գրիչ ձեռք ստանելով , իր մէկ հրամանով ուզէր ամբողջ մեցիլ պանդուխտներ զէպի հայրենիք վերադարձնել : Կարծես թէ բարեկարգութեան մը նոր թուական է իր բացումը , ինչքի և կեանքի ապահովութեան կը թագաւորէր այն սեղ . իսկ միւս կողմէն . Բարան պահանջմամբ , Բարկէններու պաշտեցեալ Օրմանեանը կը հեռագրէ իրենց թէ , «իրենց հօտը յորդորեն , այդ կօմիտէ կոչում սրիկաները հալածեն» , ինչպէս որ «Շարժում» Պուլկար թղթակցիցը 183 թիւին մէջ մանրամասն կը գրէ :

Իսկ երկու ամիս պայմանաժամ որոշող Բարկէն մը իր պատրաստութիւն սիրելի երեսնալու համար՝ այս հեռագրի հանդէպ ի՞նչ ընթացք բռնել հարկ էր , որ ճերմակ երես դուրս գար , շուտ ընդ փոյթ սեղեկագիր մը պատրաստելով «կողմակէ 80 հոգիէ բաղկացեալ խումբ մը զինեալ հայեր սահման անցած թիւրք քիւրս զօրքերու հետ կոտոր ըրունուած են . և յայտնի ճանչցուած Սերոբ ևս կրկի կուզան գիւղի մէջ կը մասնուի , կը պաշարուի և կը սպանուի իր սեղեկագրութեամբ կաւեալ յորախոթութեան Օրմանեանի և Արթիւնի , որ «Շարժում» թիւ 184 թուոյն մէջ կրկին Պուլկար թղթակցիցը կը գրէ : Այժմ նկատուողութեան անուշուր զլիստոր կէտր սա է որ (*) .

(*) Գաւառական առաջնորդներու :

Բարկէն մը , Օրմանեանի նուանաւորութեան ներքեւ Արմուշ կը թու թիւն առած , անկէ ձեռնադրուած և անոր հրամանաւ Մշտ ընդհանուր սեղապահ եղած է , արեւօք այլևս մեցիլ պանդուխտ ի՞նչ հաւատ պիտի ունենայ իր սեղապահի վրայ , քանի որ իր Պատրիարքի կործանարար ընթացքը հրապարակի վրայ կ'իցած է . հետեւորտ այդ տեսակ վատի մը ձեռնասունը ուրիշ բան մը չընէր , եթէ ոչ իր վարդապետի օրինակին հետեւելով . ուրեմն մենք ինչու հաւատանք թէ անկեղծօրէն եղած է այդ հրաւերը , և ատոր ներքեւ թագուն նպատակներ չկան , քանի որ ճշմարտութիւնը արեւի նման կը փայլի : Գանի ամբաներէ ի վեր վառնայի լրագրութեան Տրապիզոնէ եկած մեցիլ և շատ մը սեղեկի պանդուխտներու աղեկաւոր նախնիներ կը հրատարակուին , և Տրապիզոնի առաջնորդարանի միջոցաւ Պատրիարքարան կը ըողորեն . այդ ըողորներ անտելի մնացին : Միթէ՞ Բարկէն այդ չէր գիտեր , և ինքն բուն իսկ իր աչքով չէ՞ր տեսած Տրապիզոնի մէջ , երբ զէպի Մուշ իր պաշտօնատեղին կերթար : Այդ բանտարկելոց մեծամասնութիւնը իր թեմին կը պատկանէր , քանի որ անոնց մասին կատարուողութեան կողմէ տեղեկատուութեան և կառավարութեան տեղեկագիրներ վատ պատրիարքներու ձեռամբ , Սուլթանին կանցնին , և իրրեւ զէնք գործածուելու հայցս ունէ , իր հայալինջ քաղաքանութեան զօրավիգ ըլլան :

կածելի բան մը չկար , և օրինաւոր անցագրով ելած էին իրենց հայրենի օճախը երթալու . ինչու չը միջամտեց . աղղու ձեւով մը լողորթելով : Այժմ մեցիլ պանդուխտ ի՞նչ փաստի վրայ հիմնուած զէպի լր օճախը վերադառնայ , ինչու մեցիլն հաստատայ որ ինքն ևս այն խեղճերու նման տաճկական նաւահանգիստներէն միտն մէջ ամբաներ տարիներ բերդորդելութեան չլիտի դատապարտուի . ինքն Բարկէն կերպարանութե՞ ողջ և անփաստ մեցիլ պանդուխտին իր օճախը հաւանքը , որ անանց ամշնալու իր կոչով կը յայտարարէ թէ «երկու ամիս յետոյ , իրենց ամուսնանելուն տրտուած թիւն պիտի արուի կրկին ամուսնանալը» :

Հուսկ յետոյ Բարկէնի ներկայացուցած ձեռն հրահանգն ինկատի առնելով , այսչափ կրանք իրեն թող ինքը ձեռնամուխ չլինի իր ուժէն վեր խնդիրներու որոնք իր վարկը արատաւորելու շափ կսպասան . պէտք է ինքը ինկատի առնէ թէ՛ կայ իրմէ և Պուլկար կրօնական ժողովին շատ ու շատ բարձր հոգեւոր իշխանութիւն մը , որը միտն իրեն կը վերապահէ սոյն օրմանակ ծանրակշիռ խնդիրներու բռնումը :

Ինքն ժողովրդական առաջնորդական սեղապահ մը ըլլալով , պարտի իր իսկ շափովը զործել :

Մակար Յովհաննէսեան
Պուրկաղ , 6 Դեկտ.

—) (—

